ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

14 հունիսի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Մաելս Ազիզբեկյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ ք.Երևան, Պուշկինի փողոց 51/1 հասցեի բազմաբնակարան շենքի բակային հատվածի մեքենաների համար նախատեսված միակ մուտքի դիմաց գտնվող ինքնակամ կառույց մետաղական ավտոտնակը ապամոնտաժելուն և տարածքը նախկին տեսքին բերելուն, ինչպես նաև քարե շարվածքով պատը քանդելուն, և ք.Երևան, Պուշկինի փողոց 51/1 հասցեի կողմից դեպի շենք մուտք գործող երկու շենքերի ավտոկայանատեղիները միմյանց կապող միակ մուտքը բացելուն պարտավորեցնելու պահանջի մասին, թիվ ՎԴ/1597/05/22 գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 18-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Մաելս Ազիզբեկյանը 2022 թվականի մարտի 14-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, որով պահանջել է պարտավորեցնել պատասխանողին ապամոնտաժել ք.Երևան,

Պուշկինի փողոց 51/1 հասցեի բազմաբնակարան շենքի բակային հատվածի մեքենաների համար նախատեսված միակ մուտքի դիմաց գտնվող ինքնակամ կառույց մետաղական ավտոտնակը և տարածքը նախկին տեսքին բերել, ինչպես նաև քանդել քարե շարվածքով պատը և բացել ք.Երևան, Պուշկինի փողոց 51/1 հասցեի կողմից դեպի շենք մուտք գործող երկու շենքերի ավտոկայանատեղիները միմյանց կապող միակ մուտքը՝ վերացնելով 2022 թվականի փետրվարի 22-ի «Վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 607-Ա որոշումը:

2. Վարչական դատարանը (դատավոր՝ Մ.Մելքումյան) 2022 թվականի մարտի 21-ին որոշում է կայացրել հայցադիմումը վերահասցեագրելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) Դիմումում հայցվորը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, նշել է, որ ինքնակամ կառույցը գտնվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի վրա, ուստի գործող իրավակարգավորումների համաձայն՝ այդ կառույցը քանդելու լիազորությունը վերապահված է Երևանի քաղաքապետարանին:*

Այսինքն, Երևանի քաղաքապետարանը սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասի վրա կառուցված ինքնակամ շինությունը քանդելու լիազորությունն իրականացնելիս հանդես չի գալիս որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, այլ իրացնում է իր սեփականատիրական իրավունքները:

Ինքակամ կառույցի, այդ թվում՝ դրա քանդման հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով:

Այլ կերպ՝ վեճը վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող սեփականության իրավունքի իրականացման կարգին, հետևաբար դատարանը գտնում է, որ ներկայացված պահանջը ենթակա չէ ՀՀ վարչական դատարանում քննության»:

3. Թիվ ՎԴ/1597/05/22 գործը 2022 թվականի ապրիլի 4-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ.Սարգսյանին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Լ.Սարգսյան) 2022 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ, գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով, գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ներկայացնելով հետևյալ պատճառաբանությունները. *«(…) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:*

Նշված նորմի մեկնաբանությունից բխում է, որ հողամասի սեփականատիրոջը նշված նորմով իրավունք է վերապահված քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը, ընդ որում առանց դատարան դիմելու, իսկ այն դեպքում երբ ինքնակամ կառույցը գտնվում է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, ապա ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) իրավասությունը վերապահված է օրենքով սահմանված իրավասու մարմիններին, ընդ որում իրավասու մարմինը նշված գործողություն կատարելու համար պարտավոր է կայացնել համապատասխան որոշում:

Տվյալ դեպքում հայցվորի կողմից հայցադիմումում նշված հայցապահանջի փաստական հիմքերից բխում է, որ ք.Երևան, Պուշկինի փողոց 51/1 հասցեի բազմաբնակարան շենքի բակային հատվածում տեղադրված խնդրո առարկա ինքնակամ կառույց մետաղական ավտոտնակը գտնվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողի վրա, հետևաբար հայցվոր կողմը դիմել է նաև Երևան համայնքին՝ արտադատական կարգով հարցին լուծում տալու համար:

Վերը նշված նորմի բովանդակությունից հստակ բխում է, որ բավարար հիմքերի առկայության պայմաններում Երևան համայնքն ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) աշխատանքը, ի դեմս իրավասու մարմին Երևանի քաղաքապետարանի, պետք է իրականացնի համապատասխան որոշում կայացնելու հիման վրա, ընդ որում նման որոշում կայացնելուն պետք է նախորդեն

որոշակի իրավական ընթացակարգեր, մասնավորապես՝ նշված մետրաղական ավտոտնակի՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողի վրա առկա լինելու, այն ինքնակամ լինելու և մի շարք այլ հանգամանքների պարզում, որին նոր միայն հաջորդելու է համապատասխան որոշման ընդունում, որպիսի պարագայում հարց է ծագում, թե արդյո՞ք Երևան համայնքը տվյալ հարցի լուծմանն ուղղված գործողություններ կատարելիս գործելու է որպես հանրային իշխանական իրավազորություններով օժտված սուբյեկտը, թե ոչ, արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ, արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

(…)

Դատարանը, գտնում է, որ սույն գործը ենթակա չէ քննության ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով, հետևաբար համաձայն չէ ՀՀ վարչական դատարանի՝ գործը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին վերահասցեագրելու որոշման հետ, որպիսի պայմաններում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, գտնում է, որ վերը նշված հարցերին սպառիչ պատասխան տալու և թիվ ՎԴ/1597/05/22 գործի ենթակայության հարցը լուծելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին (…)»:

5. Թիվ ՎԴ/1597/05/22 գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հունիսի 8-ին:

Ենթակայության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22012020-01-0248 վկայականի համաձայն՝ ք.Երևան, Կենտրոն, Մ.Սարյան փողոց 19-21 շենք հասցեում գտնվող 01-006-0401-0115-001-058 կադաստրային ծածկագրով

16քմ ավտոկայանատեղիի նկատմամբ գրանցված է Մաելս Վաչագանի Ազիզբեկյանի սեփականության իրավունքը:

7. Երևանի քաղաքապետի՝ 2022 թվականի փետրվարի 22-ի թիվ 607-Ա որոշմամբ Մաելս Ազիզբեկյանի ներկայացուցիչ Կարո Ասատրյանի՝ ք.Երևան, Պուշկինի փողոց 51/1 հասցեի բազմաբնակարան շենքի մուտքի դիմաց գտնվող ինքնակամ կառույց մետաղական ավտոտնակը ապամոնտաժելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարան հասցեագրված դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցվել է այն պատճառաբանությամբ, որ հնարավոր չի եղել հայտնաբերել խնդրո առարկա ավտոտնակն օգտագործող անձին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցը քանդելու (ապամոնտաժելու) հետ կապված հարաբերությունները ծագում են հանրայի՞ն, թե մասնավոր իրավահարաբերություններից:*

9. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

10. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:

Նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

11. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

12. Սույն որոշման 8-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

13. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության* վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ[1]:

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

14. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

15. Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները»:*

16. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) իրավասությունը պատվիրակել է տեղական ինքնակառավարման մարմնին, ընդ որում՝ համապատասխան որոշման կայացման պայմաններում: Այսինքն՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցը կարող է քանդվել (ապամոնտաժվել) միայն իրավասու մարմինների կողմից ընդունված որոշման առկայության դեպքում, որը կայացվելու է համապատասխան վարչական վարույթի հարուցման և փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում: Տվյալ պարագայում Երևանի քաղաքապետարանը՝ որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, որոշելու է տվյալ ինքնակամ կառույցի ճակատագիրը՝ իրականացնելով իր հանրային իշխանական պարտականությունները:

17. Այսպիսով՝ սույն գործով Մ.Ազիզբեկյանի և Երևանի քաղաքապետարանի միջև ծագած վեճը վերաբերում է համայնքային սեփականություն հանդիսացող

հողամասում գտնվող ինքնակամ կառույցը քանդելու (ապամոնտաժելու) համար իրավասու մարմնի կողմից որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելուն, որպիսի իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից: Ավելին, սույն որոշման 7-րդ կետում շարադրված փաստական հանգամանքից հետևում է, որ Մ.Ազիզբեկյանի ներկայացուցչի դիմումի հիման վրա խնդրո առարկա ինքնակամ կառույց մետաղական ավտոտնակն ապամոնտաժելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի կողմից հարուցվել է վարչական վարույթ, որպիսի հանգամանքը ևս ընդգծում է սույն իրավական վեճի հանրային բնույթը:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ սույն գործով Մ.Ազիզբեկյանի և Երևանի քաղաքապետարանի միջև ծագած իրավական վեճը բխում է հանրային իրավահարաբերությունից, գտնում եմ, որ թիվ ՎԴ/1597/05/22 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/1597/05/22 գործն ըստ հայցի Մաելս Ազիզբեկյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ ք.Երևան, Պուշկինի փողոց 51/1 հասցեի բազմաբնակարան շենքի բակային հատվածի մեքենաների համար նախատեսված միակ մուտքի դիմաց գտնվող ինքնակամ կառույց մետաղական ավտոտնակը ապամոնտաժելուն և տարածքը նախկին տեսքին բերելուն, ինչպես նաև քարե շարվածքով պատը քանդելուն, և ք.Երևան, Պուշկինի փողոց 51/1 հասցեի կողմից դեպի շենք մուտք գործող երկու շենքերի ավտոկայանատեղիները միմյանց կապող միակ մուտքը բացելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ